

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 13 ՅՈՒԼԻՍ, 1929

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՍԷՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵՒ ՔՈՅՐԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ԹՐԳ. ՏԻԿ. Վ. ՊԵԿԵԱՆ

ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆՔ

ՏՕՔԹ. ՈՒԷՊՍԹԸՐ

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Է

ՎԵՐ. Հ. ԿԵՕՎԳԱԼԱՅՃԵԱՆ

ԴԷՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ

ՓՐՕՖ. Ջ. Ա. ՊԷՋՃԵԱՆ

ՆԱՄԱԿ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՄԷՆՈՒՆ ՀԱՄԱՐ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

«ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՃ» ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կնոճնարարոյական, կրթական գիտական պարբերաթերթ.

Արտօնատէր

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան

Տնօրէն—խմբագիր

Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական ոսկի:

Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

ՓՈԽԱՆ ԸՆԿԱԼԱԳՐԻ

(Ի հաշիւ 1929ի բաժնեգնին)

Ստացանք Տիար Յովհ. Փալանճեանէ, Հալէպ, 1.50 սուր. ոսկի. Վեր. Ս. Մելքոնեանէ, Աղեքսանդրիա, 1.00 տոլար, Մ. Սինանեանէ, Հալէպ, 37.5 զրշ. արծաթ. , Մ. Քէօրօղլուեանէ, Պիթիաս, 85 զրշ. արծթ. , Յակոբ Դըսաճըզեանէ, Լարնաքա, 101.25 զրշ. արծթ. , Ն. Գումրուեան, Թանթա, 1.00 տոլար, Սամուէլ Դըսաճըզեանէ, Աղեքսանդրէթ, 1.50 սուր. ոսկի, Սարգիս Բչազճեանէ, Պէյրութ, 1.25 սուր. ոսկի. Արշակ Սընըզճեանէ, Պէյրութ, 6.00 սուր. ոսկի, Խ. Կիւզէլիմեանէ, Գահիրէ, 2.10 Եգիպ. ոսկի, Մարտիրոս Կէրթմէնեանէ, Փասատինա, 108.75 զրշ. արծթ. և 5.00 սուր. ոսկի, Յակոբ Մուրատեանէ Ուինչէսթըր, 1.50 տոլար, Կարուճ Մուրատեանէ, Քալիֆօրնիա, 1.00 տոլար, Թորոս Զարմանեանէ, Միլան, 1.00 տոլար, Հ. Ս. Խարաճճեանէ, Շիպակօ, 1.00 տոլար, Վեր. Ս. Ս. Մանուկեանէ, Հալէպ, 7.50 սուր. ոսկի, Տիկ. Տուտու Պայրամեանէ, Նիւ-Եօք, 1.00 տոլար, Տիար Մ. Նիկողոսեանէ, Աթէնք 5.00 տոլար, Փրօֆ. Լ. Լիւոնեանէ Աթէնք, 1.50 տոլար:

ԿԱՐԵՒՈՐ

Հալէպի մեր յարգելի բաժանորդներէն կը խնդրուի վճարել իրենց բաժնեկիները յըրուիչ Պ. Մանուէլ Պօղոսեանի: Սուրիոյ և արտասահմանի բաժանորդներէն կը խնդրուի վճարել իրենց բաժնեկիները մինչև Օգոստոսի վերջը:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Տիար Մ. Կէրթմէնեան, Փասատինայէն, հինգ սուրիական ոսկի, կարօտներու «Նոր Աւետարներ» զրկելու համար: Տիար Մ. Նիկողոսեան, Աթէնքէն, մէկ տարուայ «Նոր Աւետարներ» Տիար Կ. Վառվառեանի, Գահիրէ, և Տիկ. Ն. Զահրմէնի, Պրուքշայր, վեցամսուայ «Նոր Աւետարներ» Տիկ. Ե. Յակոբեանի, Պրուքշայր

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆՔ, 13 ՅՈՒԼԻՍ, 1929

ԹԻԻ 14

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (4)

ՄԵՐ ԱՆՑԵԱԼ ՅՕԴՈՒԱԾԻՆ մէջ ըստ ժէինք թէ ուէ հաստատութիւն մը կամ չարժու մը իր ներքին իրական արժէքներուն չնորհիւ ծագում կ'առնէ, կը զարգանայ և կ'ապրի: Արդ կ'ուզենք յիշել այն արժէքներէն ոմանք, որոնց կը պարտի Աւետ. Եկեղեցին իր ծաւալում ու զոյութիւնը:

1. ԿՐՕՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ՀԵՂԻՆԱ-ԿՈՒԹԻՒՆԸ կը պատկանի Ս. Գրքի և Աւետարաններու մէջ յայտնեալ Քրիստոսի՝ քան թէ մարդկային ուէ մէկ կազմակերպութեան, — Եկեղեցիի, կամ անոր հոգեւոր պաշտօնէութեան կամ և Եկեղեցական ժողովի: Ահա ասկէ ծագում կ'առնէ աւետարանական յորջորջումը, որով Բողոքականները կը կոչեն իրենք զիրենք: Հոգեւոր կեանքի չափանիշը յայտնուած է Յիսուս Քրիստոսի մէջ և չի կրնար որոշուիլ ուէ անհատի կամ մարմնի մը կողմանէ: Եկեղեցին կամ ուէ կրօնական մարմին մը առաջնորդողի պարտականութիւնը ունի միայն և ոչ թէ բացարձակ հեղինակի իրաւասութիւնը:

2. ՄԱՐԴԸ ԲԱՅԱՐՁԱԿ ԻՐԱԽՈՒՆՔԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԱՅՆԷԼԷ իրեն յարմար ուէ ժամանակ մը, ուէ տեղ մը և ուէ կերպով ուղղակի Աստուծոյ մօտենալու՝ առանց ուէ մարդկային արաբածի մը միջնորդութեան, ո՛չ երկնքի մէջ և ո՛չ ալ երկրի վրայ: Աւետարա-

նական Եկեղեցին երբէք պէտքը չ'զգար մասնաւոր զատակարգի մը զոյութեան այսպիսի պաշտօն մը կատարելու համար, հետեաբար չ'ընդունիր քահանայութիւնը, միակ քահանան և բարեխօսը նկատելով Տէր Յիսուս Քրիստոսը: Իւրաքանչիւր հաւատացեալ իր իսկ քահանան է: Բոլոր Եկեղեցական պաշտօնէութեան գործը կը բաղկանայ առաջնորդողի դերը կատարելէ ոչ թէ՛ միջնորդի:

3. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՒԵԼԻ ԿԸ ՇԵՇՏԷ ԿԵԱՆՔԸ քան թէ արարողութիւնը և դաւանանքը: Սխալ է այն կարծիքը թէ Աւետ. Եկեղեցին արարողութիւն չ'ընդունիր և կը հակառակի անոր: Ուէ մէկ Եկեղեցին ունի իր արարողութիւնները, պարզ կամ ճոխ, որոնք պաշտամունքի իրր մասնաւոր ձև մը կը ծառայեն ներշնչող միջավայր մը ստեղծելու, հոգիներուն թռիչք տալու և հոգեւոր ճշմարտութիւնները ազդեցիկ ընծայելու համար: Սխալ է նոյնպէս խորհիլ թէ Աւետ. Եկեղեցին կամ անոր մէկ մասը արժէքէ զուրկ կը նկատէ դաւանանքները, որոնք մտաւորական տարազներ են մարդերու կողմանէ քանաձեւում՝ հոգեւոր իրականութիւնները կուր կերպով ներկայացնելու համար: Բայց անպատճառ ուղղափառ չի նկատեր այն մարդը, որ որոշ դաւանանք մը ընդունած է, այլ աւելի զայն՝ որ Քրիստոսի կը հետեի: Էն օգտակար, էն յարմար և ընդունիլի պաշտամունքի ձևը այն է՝ որ բարձրագոյն հոգեկան վիճակը կ'ստեղծէ մարդուն մէջ և վի-

հագոյն կեանքը ապրելու կը մղէ զայն: Իսկ ուղղափառութեան չափանիշն է քրիստոնէական կեանքը ոչ թէ զաւանանքը: Մէկ խօսքով, կեանք և ոչ ձեապաշտութիւն:

4. ՔՐԻՍՏՈՍԻ ՀՍԻՍՏՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԵՒ ԲԱԼԱՐԱՐ ԱՍՅՄԱՆՆ Է, որ կը պահանջուի անհատէ. «մարդը հաւատքով կ'արդարանայ»: Մարդուն կողմանէ ուրիշ և ոչ մէկ արարք և ոչ մէկ խուհուրդ մարդը Աստուծոյ հետ կը հաշտեցնէ: Օրինապաշտ արարքները և եկեղեցական խորհուրդները անզօր կը մնան արդար կեանք մը ստեղծելու մէջ, անոնք առանձինն վերջապէս կը յանգին անհոգի մեքենականութեան մը: Հայ Աւետ. Եկեղեցին կը դաւանի թէ իր ընդունած Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդները, իրենց ներկայ ձեւերովը, փրկագործ հանգամանքէ զուրկ, արժէք ունին միայն այն առիթն՝ երբ իբր միջոց կը ծառայեն անհատին հաւատքը զօրացնելու և խորունկընդլնելու:

5. ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՀԱՒԱՏԱՅ ԿՍՏՐԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ և ոչ թէ կղերի տիրապետութեան: Ժողովրդին կղերական և աշխարհական կոչեալ մասերը հաւասար ձայնի իրաւունք ունին եկեղեցին թէ՛ դաւանական թէ՛ վարչական խնդիրները կարգադրելու մէջ: Բառին իսկական առումով կղերական և աշխարհական դասակարգեր գոյութիւն չունին այս եկեղեցին մէջ, բոլոր հաւատացեալ աշխարհականները կղերականներ են և բոլոր կղերականները աշխարհականներ. վերտահելի քրիստոնէական կեանքի տէր ունէ անհատ կրնայ հոգեւոր պաշտօն կատարել:

6. ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-

ԹԻՒՆ ՄԸ ԶԷ, այլ իրապէս քրիստոնէաներու մէկ եղբայրութիւնը, որուն նպատակն է առաջին՝ ընկերացող հաւատացեալներու հոգեւոր կեանքը զօրացնել և երկրորդ՝ Աւետարանի լոյսը տարածել իրմէ դուրս գտնուողներուն մէջ: Եկեղեցին կրնայ ընկերային, ազգային գործունէութիւն ունենալ, քաղաքական հասարակութեան մը կերպարանքը ստանալ, բայց նա ամէնէն առաջ և ամէնէն աւելի հոգեւոր ընկերակցութիւն մ'է հոգեւոր նպատակներով: Բառին իրական նշանակութեամբ եկեղեցի չի կրնար կոչուիլ այն՝ որ կեանքի բոլոր մարզերուն մէջ գործունէութիւն կը յուսնէ բացի հոգեւորականէն: Այն եկեղեցին որ չի կրնար իր անգամներուն կեանքը բարձրացնել և խորունկցնել, չի կրնար նաւաբեկեալ կեանքերը փրկութեան առաջնորդել, այն եկեղեցին որ դադրած է հոգեւոր ազգակ մ'ըլլալէ վրիպած է նշանակէտէն, որ իր գոյութեան իրաւունք կուտայ:

ԱՀԱ ԱՅՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԷՆ ՈՄԱՆՔ, որոնց կը հաւատայ Աւետ. Եկեղեցին և որոնց կը պարտի իր գոյութիւնը: Եւ տակաւին կը հաւատայ թէ ասոնք այնպիսի սկզբունքներ են որոնք տակաւին արժէք ունին, և փորձը ցուցուցած է որ ինք այնչափ կենդանի, զօրուոր, արդիւնաւոր և օգտակար եղած է որչափ որ հաւատարիմ գտնուած է անոնց: Ուստի ներկայիս երբեք միտում մը չունի զանոնք լքելու և ուրանալու ունէ մէկ նպատակի մը համար: Ուրիմն ինչպէ՞ս կարելի է հասարակաց գետին մը պատրաստել միութեան համար:

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

ՍԷՐ

ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵՒ ԲՈՅՐԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Հոս թերեւս ամենէն աւելի դժուար է «Սիրով արմատացած և հաստատուած ըլլալ»։ Եղբայրներու և քոյրերու շահերը որ ի սկզբանէ նոյնն են, տակաւ կը զատուին, և, եթէ մէկը ուշադրութիւն չընէ, վտանգ կայ որ հակառակութիւն յառաջ գայ, մանաւանդ ժառանգութեան մը պարագային որ կրնայ թունաւորիլ և կործանել ընտանեկան կեանքը։ Եղբայրներ և քոյրեր ընդհանրապէս տարբեր են իրարմէ, և երբեմն շատ տարբեր, անոր համար իւրաքանչիւրին կողմէն ջանք մը պէտք է զիրար հասկնալու և սիրելու, հակառակ այս տարբերութիւններուն, կամ այս տարբերութիւններուն համար իսկ, Գրեթէ անխուսափելի է որ երբեմն դժուարութիւններ պատահին. բայց այդ պարագային անգամ, անոնք որ «Սիրով հաստատուած» են, կրնան վստահ ըլլալ թէ յաղթանակը պիտի տանին և յետոյ այնքան աւելի պիտի սիրեն զիրար որքան լուրջ եղած է այդ դժուարութիւնը։ Իսկապէս չկայ այնքան գեղեցիկ բան մը որքան միութիւնը եղբայրներու և քոյրերու որոնք միեւնոյն խորհուրդը ունին իրարու հանդէպ, զիրար կը սիրեն ու կ'օգնեն իրարու որքան ատեն որ մօտ են, և վերջէն ալ, երբ կեանքը կը բաժնէ զանոնք։

Եղբայրական սիրոյ աշկերտութիւնը այսպէս՝ լաւագոյն դպրոցը չէ՞ իր եկեղեցիին աղէկ անդամ մը ըլլալ սորվելու։ Եկեղեցին արդարեւ մեծ ընտանիք մըն է խմբուած միեւնոյն երկնային Հօր շուրջ և հաղորդակցելով անդրանիկ Եղբօր հետ։ Կարելի չէ չափազանցել եկեղեցիին դերը իբր անաշխիւ ըջիջը Աստուծոյ

թագաւորութեան և իբր անարկայական դաս մը մարդոց հասկցնելու համար թէ ինչ կրնար ըլլալ ընկերութիւնը եթէ ան Աստուծոյ սիրով տոգորուած ըլլար։ Եկեղեցին պէտք է շատ լաւ միացած ընտանիք մ'ըլլայ, որուն իւրաքանչիւր անդամը կանչուած է դեր մը կատարելու, որքան ալ համեստ ըլլայ ան, և եթէ մէկ անդամը տառապի՝ պէտք է որ միւս անդամներն ալ տառապին անոր հետ, երբ մէկը կը պատուի՝ միւսներն ալ պատուուին անոր հետ։ Ընտանիքը եկեղեցիին համար և եկեղեցին ընտանիքին համար. այսպէս պէտք է ըլլայ սիրոյ կեանքին դպրոցը, այսինքն երկիւնքին Դպրոցը, և այդ է պատճառը որ Նոր կրտակարանը այնքան կը պնդէ թէ Քրիստոնեաները պարտին հաւատարմ ըլլալ թէ իրենց ընտանիքին և թէ իրենց եկեղեցիին։

Այս բոլորը կը յանդի բնական սէրը աննիւթականացնելու (SUBLIMER) գաղափարին։ Արդի հոգեբանութեան աս բառը կը նշանակէ այլափոխել, հոգեկանացնել, վսեմացնել բնական զգացումները. նիւթէն ու մարմինէն՝ հոգիի աստիճանին բարձրանալ, մարմինին մէջ այնպէս մը թափանցիլ հոգեկան տարրը որ երթալով նուազի անաշխիւն դերը և ան ջնջուի հոգիին յաղթանակին ներքեւ։ Հոտ չէ՞ արդէն բուն իմաստը երկրային կեանքին. վերելք մը որ նիւթական աշխարհէն մեկնելով հետզհետէ մեզ կը հասցնէ դէպ ի հոգեկան կեանքի կատարները։ Քանի որ այս այսպէս է, տարիքը, ծերութիւնը այլևս կարելութեամբ չունին, ընդհակառակը մարդ որքան կը յառաջանայ կեանքի մէջ՝ այնքան աւելի կը բարձրանայ դէպի աստուածային կեանքի լեցունութիւնը, որ սիրոյ կեանքն է։

Երբեմն անանկ կարծուած է թէ մարդկային սրտին համար եթէ ոչ անկարելի

գէթ շատ դժուար է այդքան սէրեր սընուցանել միաժամանակ. թէ, օրինակի համար, ամուսինը կամ կինը սիրող մը չի՝ կրնար սիրել ծնողքը, թէ ամուսնական սէրը կը նուազի զաւակները սիրելով: Աս ինծի սխալ կը թուի, որովհետեւ մարդ որքան կը սիրէ, այնքան աւելի սիրոյ ընդունակ կը դառնայ: Կարելի է ըսել թէ սիրտը կը մեծնայ և կ'ընդարձակի ուրիշները սիրելով, և ընդհակառակը կը կծկուի, կը ցամքի և հուսկ ուրեմն անընդունակ կ'ըլլայ սիրելու երբ ինքզինքը միայն կը սիրէ: Ծանօթ են այն տարիքոտ ծեր աղջիկները, որոնք ամբողջ իրենց սիրելու ուժը կը յատկացընեն կատուի մը, պզտիկ շան մը կամ թութակի մը վրայ, ու պատրաստ են ամէն զոհողութիւն ընել անոնց համար, ինչ որ բնաւ պիտի չընէին մարդկային էակի մը համար: Ի՞նչ տխուր տեսարան: Բարեբաղդաբար շատ մը ամուրի կիներ ալ կան որոնք կը պահեն իրենց սիրելու ընդունակութիւնները և զանոնք կ'աճեցնեն տարիներու ընթացքին:

Այսպէս կ'ըլլայ բերանը մեծ գետերու, զոր օրինակ Րօնի, Րէնի, Նեղոսի, որոնք երթալով կ'ընդարձակին և զանազան ճիւղերու կը բաժնուին, քանի կը մօտենան այն ընդարձակ ծովուն թրուն մէջ պիտի թափին. իրենց բերանը երբեմն այնքան խոշորցած կ'ըլլայ որ զրեթէ մարդ չի կրնար զանազանել այդ ծովէն: Մեր սրտին պատմութիւնը չէ՞ ասիկա, որուն կեանքը կ'սկսի գրեթէ աննշմարելի ակէ մը, և ինչ չափով որ ան դէպի Աստուծոյ կ'երթայ՝ այնքան աւելի կ'ընդարձակի, այնքան աւելի աստուածային կը դառնայ, ու կը նմանի Անոր որուն մէջ կորսուելով կը ճոխանայ աւելի քան երբէք: Պօղոս Առաքեալ ալ նոյնը կը հաստատէ մեր բնաբանին յաջորդ համարներուն մէջ: «Օր

պիտի դայ որ» կ'ըսէ ուրիշ տեղ մը, «Աստուած պիտի ըլլայ ամէնը ամէն բանի մէջ»: Ա. Կորն. 15. 28:

Վերջացնելու համար մէկ խօսք ևս: Երբոր մեր Փրկիչը իր վերջին շունչը պիտի աւանդէր, իր տագնապի երկար լուսթեան միջոցին եօթը խօսքեր տասանեց: Ծանօթ են այդ եօթը խօսքերը, որոնցմէ ամենէն յուզիչը իր մօրը և իր աշակերտին ուղղածն է. «Ո՛վ կին՝ ահա՛ քու որդիդ. Յովհաննէս, ահա՛ քու մայրդ»: Այսպէս ուրեմն, իր կեանքի ամենէն հանդիսաւոր պահուն, որ բարոյական աշխարհի պատմութեան ալ ամենէն հանդիսաւոր պահն է, Յիսուս Քրիստոս տակաւին իր սիրական մօրմով և ամենասիրելի աշակերտով զրադած էր: Այդ չ'ապացուցանե՞ր թէ Ան ընտանեկան կեանքի և բարեկամութեան մասնաւոր կարեւորութիւն մը կուտար: Ընտանեկան և բարեկամական սէրերու միջև գերագոյն ներդաշնակութիւն մը չէ՞ք գտներ հոտ: Ահա՛, թէ ինչու մենք առանց վարանելու կը թելադրենք որ մեր բոլոր ընտանիքները իրենց մէջ առնեն Մեծ Բարեկամը: Ան որեւէ մէկէն աւելի պիտի գիտնայ ամբացնել ընտանեկան կապերը, սորվեցնել անոր բոլոր անդամներուն զիրար միշտ աւելի խորունկ կերպով և աւելի իրական կերպով սիրել, առանց երբէք թերանալու բարեկամներու սիրոյն մէջ: Ան մեզի պիտի ցուցունէ թէ ի՞նչպէս ընելու է որ ամէն ոք ի՛ր տեղը և իր պատշաճ տեղը ունենայ ընտանեկան կեանքին մէջ, կատարելով աշկերտութիւն մը երկինքի համար, ուր Աստուած պիտի խմբէ բոլոր ընտանիքները որոնք սիրել զիտցած են իրմով:

Ժընև

ՅՐԱՆՔ ԹՈՎՄԱ
ԹՐԳ. Վ. ՊԵԿԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՃՇՄԱՐԻՏ ԿՐՕՆՔԸ

Այս Յոդուածը, Պէյրուի, Ամերիկեան Համալսարանին փրօֆէսօրներէն Տօքթ. Ուէ-պսթըրի՝ Համալսարանիս մէջ ըրած չորս իւրարու յաջորդող բանախօսութիւններուն ամփոփումն է: Տօքթ. Ուէպսթըր Մերձաւոր Արեւելքի ամենամեծ ահնաբոյժը ըլլալով 37 տարիէ իվեր Համալսարանիս մէջ աշխատակցած է: Ան քրիստոնէութիւնը իր փորձառութեամբը գիտնալով, իր աշակերտներուն վրայ ալ քրիստոնէական ազդեցութիւն թողուցած է:

ԵՆ. Մ. Շ.

Շատ անգամ Մարդկային Յառաջդիմութիւն ըսելով կը հասկնանք ի. դարու մեծ զիւտերն եւ հնարքները, այնպէս որ այս մեծ մեքենաներու եւ կրօնքի միջեւ յարաբերութիւն մը չենք գտներ: Յառաջդիմութիւնը զիտական մեծ յեղաշրջում մը չէ, ոչ ալ կրթութիւն է ան: Մեծ պատերազմի միջոցին տիւսանք թէ կրթութիւնն ու զիտութիւնը ինչ ահռելի աղէտներ կրնան բերել մարդկութեան: Ան դրամական յաջողութիւն ալ չէ: Միացեալ Նահանքները ըլլալով աշխարհիս ամենահարուստ երկիրն է, բայց մեծ ալ վտանքի ենթակայ է ան: Ես կը սոսկամ երբ երեւակայեմ այն մեծ աղէտները եւ ոճրագործութիւնները որոնք կրնան յառաջ գալ զիտութեան, կրթութեան եւ հարստութեան միացումէն: Յառաջդիմութիւն այս երեքն ալ չէ, ան կը նշանակէ շարժում մը որոշ ուղղութեամբ, դէպի որոշ վերջաւորութիւն մը, որոշ նպատակ մը աչքի առջեւ ունենալով: Ահա այս է յառաջդիմութիւնը: Ան ունի շարժում, որոշ ուղղութիւն, որոշ վերջաւորութիւն, եւ որոշ նպատակ: Ասկից զատ, յառաջդիմութիւն կը կոչուին այն տեսակ շարժումները որոնք կը ծառայեն մարդկութիւնը աւելի իմաստուն, աւելի բարի եւ աւելի ուրախ ընելու: Բարեկամներ, իմաստութիւնը խորամանկութիւն չի նշանակեր: Իմաստուն

թիւն կը նշանակէ մեր գործերուն մէջ ուղիղը որոշելու կարողութիւնը: Եւ մեր մարմնի ցանկութիւններուն գոհացում տալ ուրախ ըլլալ չի նշանակեր: Ուրախութիւնը այն գոհացումն է որ յառաջ կուգայ մեր Աստուծոյ հետ ունեցած յարաբերութենէն: Եթէ մենք, դուն եւ ես, կրնանք մեր ընկերներուն եւ դրացիներուն պզտիկ ծառայութիւն մը մատուցանել, այսինքն իրենց օգնել որ քիչ մը աւելի իմաստուն, աւելի բարի եւ աւելի ուրախ ըլլան, ուրեմն մենք կը յառաջդիմենք. հակառակ պարագային մեր առած կրթութիւնը, մեր զիտութիւնը յառաջդիմութեան նշան մը չէ:

Եւ ի՞նչ է ճշմարիտ կրօնքը, եթէ ոչ հոգիին փորձառութիւնը որ յառաջ կուգայ Աստուծոյ մերձաւորութիւնը զգալէն. եւ այդ զգացումը լեցնելով մեր բոլոր կեանքը եւ անձը, յառաջ կը բերէ գեղեցկութիւն եւ խաղաղութիւն մեր կեանքին մէջ: Բրիստօս այնպիսի անձ մըն է որ մեր կեանքին մէջ գեղեցկութիւն եւ խաղաղութիւն յառաջ կրնայ բերել:

**

Ճշմարիտ կրօնքի մէջ երեք հիմնական բաներ կան: Առօք իրարու հետ այնչափ սերտ յարաբերութիւն ունին, որ եթէ անոնցմէ ոեւէ մէկը զանց ընենք, կրօնքը կրօնք ըլլալէ կը դադրի: Այս երեք բաներն են, Աստուած, Պարտականութիւն եւ Անմահութիւն: Այս երեք բաները կը պարունակեն ամէն բան: Մարդկութեան ամենաթանկագին գանձերը ասոնցմէ յառաջ կուգան: Անոնցմէ դուրս կուգայ ճշմարիտ կեանք: Ասոնցմով է որ արուեստը կը սնուցուի: Մէկ խօսքով ամէն լաւ բան անոնցմէ յառաջ կուգայ: Անոնցմով է որ մենք աշխարհին բան մը կրնանք տալ, եւ անոնց չզոյութիւնն է որ բերած է եւ կը բերէ կործանում: Շատ մը տէրութիւններ զանոնք չունենալով կործաներ են,

և չափեր այսօր գէպի կործանում կը վազեն. եթէ Եւրոպա, Ամերիկա եւ ուրիշ տէրութիւններ այս երեք մեծ գաղափարականները չյարգեն, անպատճառ պիտի կործանին: Մենք մեր կեանքը այս երեք ճշմարտութիւններուն կը պարտինք:

Այս երեքէն առաջինը եւ ամենագլխաւորահասկնալին Աստուածն է: Բոլոր կառավարութիւնները, ընկերութիւնները, դպրոցները, համալսարանները, մէկ խօսքով բոլոր մարդկութիւնը պէտք ունին Աստուծոյ: Որչափ որ դժուարահասկնալի է, այնչափ ալ մեծ է իր զօրութիւնը: Մեր պէտքը զԱյն մեր սըրտերուն մէջ ունենալն է: Ես անոր բազակայութենէն կը սոսկամ:

Աստուած ինծի համար գոյութիւն ունեցող անձնաւորութիւն մըն է: Ես զԱյն իբր իմ ամենասիրելի, ամենապաշտելի ամենագեղեցիկ, ամենասուրբ բարեկամըս գիտեմ, և ոչ թէ մեր վրայ տիրող անգութ բռնապետ մը: Աշխարհիս մէջ ամենասիրելի, ամենագեղեցիկ, ամենասուրբ մէկը երեւակայէ, և անոր այս յատկութիւնները միլիոն անգամ մեծցուր, այն ատեն Աստուծոյ վրայ գաղափար մը կ'ունենաս:

Աստուած սքանչելի է իր արարչագործութեան եւ նոյնքան հրաշալի իր նկարագրին մէջ: Բայց Ան պատահամամբ չի գտնուիր, և բազմ մեղի չ'օգնենք զինքը հասկնալու համար, Ան կը գտնուի անոնց՝ որոնք իրեն պէտքութիւն մը կը զգան եւ զինքը կը փնտռեն: Շատ անգամ, նեղութեան ժամանակ իրեն կ'աղաղակենք, բայց արդեօք միշտ կարօտ չե՞նք իրեն: Մեր ամենաուրախ, ամենայաջող եղած ատեն արդեօք իրեն պէտքութիւն չունինք:

Այդ երեք հիմնական սկզբունքներուն երկրորդն է Պարտականութիւն և անձնաւորութիւն միասին կ'երթան: Անձի մը անձնաւորու-

թեանը մէջ ամենէն կարեւոր, ամենակայուն, բայց ամենասոսկալի բանը պարտականութիւնն է: Պարտականութեան զգացումը ամէն բան կը գերազանցէ: Առաջ պարտականութիւն կու գայ և ետքը իրաւունք: Հիմայ իրաւունքիդ մասին մի՛ խօսիր, բայց պարտականութեանդ մասին խորհէ՛:

Պարտականութեան զգացումը Աստուծոյն հետ կու գայ, և զայն կատարելէ վերջն է որ գոհացում կ'ունենանք: Մենք ամէնքս ալ գիտենք շատ մը պատմութիւններ որոնք կը լուսաբանեն պարտականութեան մը կատարումը և վարձատրութիւնը: Եւ այս պատմութեան ամենամեծը Բրիտոսի Պաշտօնական պատմութիւնն է: Ան իր գոհողութիւնով, այսինքն իր պարտականութիւնը կատարելով մեծ օրինակ մը կը հանդիսանայ: «2^է որ Բրիտոսի պէտք էր այս չարչարանքները կրել»: Աստուած և պարտականութիւն յաւիտեանս յաւիտենից կը մնան:

Երրորդ հիմնական գաղափարականը անմահութիւնն է: Անոր գոյութիւնը գիտութիւնով չենք կրնար փաստել: Բայց ես կը հաւատամ անոր գոյութեան: Ոմանք չեն հաւատար անմահութեան, բայց մենք չենք կրնար ուրանալ անոր ազդեցութիւնը մարդկութեան վրայ, թէ՛ անցեալին մէջ և թէ՛ ներկայիս: Անցեալին մէջ բոլոր ազգերը հաւատացին անմահութեան: Ես կը հաւատամ անմահութեան. 1. որովհետեւ ան կը կառավարէ մարդուն զգացումները և գործերը: Շատ մը բաներ պիտի ընէի կամ պիտի չընէի՝ եթէ անմահութեան չհաւատայի: Եւ շատ մը բաներ կ'ընեմ կամ չեմ ըներ, քանզի անմահութեան կը հաւատամ: Արդի քաղաքակրթութիւնը չպիտի ունենայինք եթէ անմահութեան չհաւատային հին ազգերը:

2. Ուրիշ աշխարհ մը ըլլալու է, ուր

այս աշխարհիս անգթութիւնները, թըշուռութիւնները եւ անհաւաստութիւնները դարմանուին: Եթէ Աստուած մը կայ, պէտք է որ անհաւաստութիւններն ալ դարմանուին:

3. Բանի որ ան կ'օգնէ մեր հանգըստութեան եւ մխթարութեան: Եթէ ես չպիտի կրնամ տեսնել իմ մեռած բարեկամներս, զաւակներս, Փրկիչս, ուրիշ աշխարհի մը մէջ, շատ պիտի նեղուէի:

4. Աստուած տակաւին աշխարհիս մէջը ունեցած իր գործը չլքուցուց: Ուրիշ աշխարհ մը պէտք է ուր Ան իր գործը կարենայ աւարտել:

5. Յիսուս ինքը հաւատաց Անմահութեան եւ զայն քարոզեց, եւ խորտակեց մահը: «Ո՛րք է ով մահ քու խայթոցդ. ո՛րք է ով գերեզման քու յաղթութիւնդ»:

* *

Յառաջդիմութեան նպատակն է մարդկութիւնը աւելի իմաստուն, աւելի բարի եւ աւելի ուրախ ընել, եւ ճշմարիտ կրօնքը մեր մէջ յառաջ կը բերէ միեւնոյն արդիւնքը: Այս երկուքն միշտ միասին կերթան: Ուր որ ասոնք կան հոն կայ նաեւ յառաջդիմութիւն: Եւ ասոնց կրօնքի յառաջդիմութիւնն չկայ:

Ամփոփեց

ՄԱՆԱՍԷ Յ. ՇՆՈՐՀՅՈՒՅԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Է

«Տէրջը առջեւ դժուար բան մը կա՞յ»
Ծննդ. 18. 12, 14:

Կ'ըսեն թէ երբեմն երբեմն թերթերու մէջ, կամ արդիապաշտ քայրդիւններու Կ. Դպրոցներուն մէջ եւ խօսակցութիւններու միջոցին Ս. Գիրքի մէջ գրուած արտասովոր դէպքերուն՝ առասպելներու պէս անիրական ըլլալուն մասին համարձակ արտայայտութիւններ կ'ըլլան: Շիտակը խօսելով մինչեւ հիմա չկրցայ

հասկնալ որ այսպիսիները ըսել կ'ուզեն թէ այդ դէպքերը պատմական չեն, թէ ոչ անոնք գերբնական են եւ հետեւաբար անոնց կատարումը անկարելի է: Անոնց բոլորն ալ պատմական դէպքեր են: Այս մասին աւելի բան մը ըսել չեմ ուզեր: Միայն սա չափը ըսեմ, որ Սուրբ Գրքի պատմական մասերը ուրիշ սովորական պատմութեան գիրքերէն շատ աւելի վստահութեան արժանի են: Չկայ ոեւէ ազգային պատմութիւն մը որ իր կողմը պայծառ գոյներով չներկայացնէ: Ս. Գրքի մէջ գտնուած պատմութիւնը այս մասին անեզական է: Ուեւ մէկ անհատին կամ ազգի լաւագոյն կէտերը յիշելով հանդերձ, անոր մեծագոյն մեղքերը եւ այսպանելի ընթացքն ալ կը պատմէ: Իսրայէլի պատմութեան մէջ չկայ թագաւոր մը, որուն թերութիւնները գրուած չըլլան հոն:

Բայց եթէ անոնք ըսել կ'ուզեն թէ այդ արտակարգ դէպքերուն տեղի ունենալը անկարելի է, իմ կարծիքովս, աւելի ցնորական եւ հակասական բան մը ըսած կ'ըլլան: Բանգի, այդ դէպքերը անկարելի նկատել՝ Աստուծոյ անհատական, անհատական, անհատական եւ անհատական ըլլալուն մասին կոտորածիլ կը նշանակէ: Եթէ ոեւէ մէկը զԱստուած չի ճանչնար վերոյիշեալ սահմանումին համեմատ, արդեօք ան ինչպիսի Աստուած մը կ'ընդունի: Արդեօք այն կ'ընդունի՞ այնպիսի աստուած մը որ արարածնէն մէկուն նման տկարութեամբ սահմանափակուած է: Արդեօք տյապէս խորհողներուն գաղափարը ի՞նչ է Աստուծոյ բնական եւ բարոյական ստորագելիներուն մասին, եւ որո՞նք են իրենց սահմանումները: Ըսելիք չունիմ կատարելապէս անկրօն եղողներուն մասին: Մեր լսածին համեմատ կարգ մը աստուածաբանութեան ուսուցիչներ եւ բարձր ուսում առած քարոզիչներ այսպիսի գաղափարներ ունին: Արդեօք

անոնք այս հակասական գաղափարները ինչպէ՞ս կը հաշտեցնեն:

Ո՛վ բարեկամներ, որ ձեր բարձր գիտական հմտութեան համար ամէնուն յարգանքին արժանի եղած էք, ինչպէ՞ս և ի՞նչ համարձակութեամբ աղօթենք այնպիսի Աստուծոյ մը, որ Ս. Գիրքի մէջ յիշուած զէպքերէն ունէ մէկը պէտք տեսած և ուզած ատեն չի կրնար կատարել: Քանզի անիմաստ կ'ըլլայ մեր աղօթքը եթէ չենք կրնար Անոր ըսել. «Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք, յաւիտեանս. Ամէն»: Քանզի մեր աղօթքներուն մէկ մեծ մասը հրաշք պահանջել է: Զօր օրինակ, մենք կը խնդրենք որ Աստուծոյ թագաւորութիւնը բոլորովին զրաւէ այսհաւատքէ զուրկ տմբարիշտ երկիրը. մինչդեռ ոչ միայն ամբողջ աշխարհին այլ նոյնիսկ մէկ մեղաւորին դարձը և բարեպաշտ կեանքը հրաշքներու հրաշքն է: Այսպէս խորհողները արդեօք երբէք չեն աղօթեր. և եթէ կ'ընեն, ռժափ սահմանափակ աղօթք մը ըրած պիտի ըլլան: Ի ցիւթէ այս կէտը կարենայի հասկնալ:

Շիտակ է որ կարգ մը հաւատացեալ նիւր չկրցան Աստուծոյ կարգ մը խոստումներուն հաւատալ, զանոնք անբնական նկատելով: Զոր օրինակ, թէ՛ Աբրահամ և թէ՛ Սառա չկրցան հաւատալ Աստուծոյ այն խօսքին՝ թէ Աբրահամ Սառայէն մանչ զաւակ մը պիտի ունենայ, քանզի անբնական նկատեցին զայն, խորհելով որ մէկը հարիւր, իսկ միւսը 90 տարեկան էր:

Զաքարիա, այդ բարեպաշտ քահանան, և կինը Եղիսաբէթ նոյնպէս չկրցան հրեշտակին հաղորդած աւետիսին հաւատալ: Զաքարիա իր զարմանքը յայտնեց հրեշտակին, յիշելովանոր թէ իրենք երկուքնին ալ ծեր են:

Մարթա և Մարիամ քոյրերը նոյնպէս չկրցան հաւատալ երբ Յիսուս ըսաւ թէ իրենց եղբայրը յարութիւն պիտի

առնէ: «Գիտենք, ըսին անոնք, որ լերջին օրը յարութիւն պիտի առնէ:» Ասոնց պէս ուրիշ շատեր ալ կրնան յիշուիլ: Բայց անոնց բոլորն ալ ետքը երբ տեսան որ այդ խօսուածները իրականացան, զղջացին և ամչցան: Յիսուսի աշակերտներէն երկուրեակ կոչուող Թովմաս ալ չհաւատաց մեր Տէրոջ յարութեան. և ութը օրէն ետքը երբ աշակերտները դարձեալ ղուռը փակ սննեակին մէջ էին, և Թովմաս ալ իրենց հետը կը գտնուէր, Յիսուս մտաւ և անոնց կ'ընտելէր կայնելով ըսաւ. «Մատդ հոս բիր և նայէ իմ ձեռքերուս, ու բեր քո ձեռքդ ու իմ կողս խօթէ, ու մի՛ ըլլաւ անհաւատ, հապա հաւատացեալ,» ըսաւ: Եւ Թովմաս պատասխանեց. «Իմ Տէր և իմ Աստուծաւ:» «Դուն զիս տեսար հաւատացիր. երանի անոնց որ տեսած չեն ու կը հաւատան,» ըսաւ Յիսուս:

Ո՛վ բոլոր քրիստոնէայ բարեկամներ, մեր Տէրոջ խօսքին համեմատ բոլորնիս ալ առանց տեսնելու հաւատացող երանելիներու զիրքին մէջ կը գտնուինք, ուրեմն մեր առանձնաշնորհին յարգը դնահատենք. ա՛լ չըսենք թէ ասոր կատարումը բնական չէ, այդ բաները այսօրուան գիտութեան հակառակ են, անոնք անկարելի են, և անոնցմէ ոմանք իբր ալլաբանութիւն, ուրիշները իբր առասպել չբացատրենք: Խոստովանինք թէ մեզի ծանօթ բնութիւնը, մեր իմաստութիւնն ու գիտութիւնը շատ սահմանափակ են, և ընդունինք թէ բնութեան Արարիչին, անոր բոլոր օրէնքներուն Հաստիչին, բոլոր իմաստութեան և գիտութեան բանալիներուն տէր եղող Աստուծոյն համար անոր կատարումը անբնական չէ, քանզի արքայութիւն և զօրութիւն և փառք Անոր կը պատկանին: Ահա այսպէս ըսել որչա՛փ շիտակ պիտի ըլլար, որովհետեւ Աստուծոյ առջեւ զժուարին բան չկայ: Ան կ'ընայ,

էթէ կամի, այս հրաշանման բոլոր գործերը կատարել մարդերուն անյայտ եւ միայն իրեն ծանօթ օրէնքներու համաձայն, եւ երբ կը փափափի, արարչագործութեան մեջ եղածին պէս ուղղակի կերպով կրնայ կատարել: Ինքն է որ կ'իշխէ, եւ ուէէ բան մը կատարելու համար միայն իր կամենալը բաւական է:

Արդ ի՞նչ գծաւարութիւն կայ ըսելու թէ Աստուած ամենուրեք, ամենագէտ եւ ամենակարող է. ասոր մէջ գիտութեան հակառակ ի՞նչ կայ, որ կարգ մը մարդիկ կ'զգուշանան այս ըսելէ: Իցիւ թէ ամէն մարդ չվախնար իր դաւանածին համեմատ խօսելէ, եւ ըլլար թափանցիկ՝ արտաքինապէս տեսնուելով այնպէս ինչպէս որ է ներքինապէս:

Տիֆէյքըր (Շար.) Զ. ԿԵՕՎԳԱԼԱՅԾԵԱՆ

ԴԵՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մի քանի շաբաթ առաջ դէպի Պաղեստին կարճ ճամբորդութիւն մ'ունեցանք: Ս. Երկիրը այցելել մեծ առանձնաշնորհում մըն է բոլոր անոնց համար որոնց նիւթական եւ ուրիշ կեանքի պայմանները թոյլատու են: Մեր կարծիքով Պաղեստինի մէջ անգամ մը չըջիլ աւելի ազդեցիկ է, քան տասն անգամ Փլուպէթի դասերուն ուսումնասիրութիւնը Կ. Դպրոցի մէջ: Որչափ լաւ պիտի ըլլար եթէ ուղեւորութեան համար աւելի զիւրութիւն տրուէր, որ Սուրիոյ Կ. Դպրոցներուն մէջ գտնուող մեր երկտասարդ զաւակները յարմար առաջնորդութեան մը տակ կարենային կարճ ճամբորդութիւն մ'ընել դէպի Պաղեստին:

Պաղեստին այցելողները, Եւրոպան եւ Ամերիկան այցելողներուն պէս, պէտք չէ ակնկալեն տեսնել կանոնաւոր քաղաքներ, քաղաքակիրթ երկիրներ, բարգաւաճ գաւառներ: Անոնք որ զարգացեալ ժողովուրդ եւ ծաղկեալ երկիր մը տեսնել կը յուսան պատրանքի

կ'ենթարկուին: Ս. Գրքի ուսանողի մը համար Պաղեստինի մէջ կարեւորագոյն բաները, զորոնք տեսնել կ'արժէ, անոր չեւերն ու ձորերը, դաշտերը, գետերն ու լիճերը, հին աղբււրներն ու ջրհորները, այգեստաններն ու պարտէզները, մէկ խօսքով երկրին բնական տեսարաններն են: Քանզի տակաւին ասոնք չեն փոխուած, անոնք տակաւին կը պահեն ճիշդ այն վիճակը զոր 2000 տարի առաջ ունէին: Պաղեստինի մէջ ամէնէն աւելի տեսնել կ'արժէ այն տեղերը, ուր մարդկային ձեռքը ամէնէն քիչ զգաւ է, եւ ուր պատմութիւնը ամէնէն քիչ փոփոխութիւն յառաջ բերած է: Որովհետեւ միայն այս վիճակին մէջ մենք պիտի կրնանք լուսագոյն կերպով երեւակայել եւ զաղափար մը կազմել թէ Յիսուս ինչպիսի՞ աշխարհագրական եւ բնական միջավայրի մը մէջ ծնաւ եւ ապրեցաւ, թէ որոնք էին դրացի ժողովուրդներուն կեանքի պայմանները եւ սովորութիւնները: Եթէ ասկէ երկու, երեք կամ չորս հազար տարի առաջուան աչքովը դիտենք Գալիլեայի ծովը եւ չըջակայ լեռներն ու հովիտները, Յորդանան գետը, Երիքովն ու Յուզայի անապատը, Մէճիտտոյի, Եստրալլոնի եւ Սարոնի դաշտերը, Հերմոն եւ Թափօր, Էյլալ եւ Դարիզիմ լեռները, Զիթենեաց Լեռը, Բեթլէհէմն ու Նազարէթը, այն ատեն Հին եւ Նոր Կտակարաններու շատ մը խօսքերը նոր լոյսով երեւան պիտի գան մեր աչքերուն առջեւ:

Պաղեստինի մէջ բոլոր չըջիկներու համար ամէնէն ուշագրաւ տեղն է Նրուսաղէմ քաղաքը: Եւ իրապէս ալ շատ մը պատճառներով կ'արժէ տեսնել զայն: Նրուսաղէմ աշխարհիս աստուածապաշտական երեք կարեւոր կրօններուն ալ, Հրէութեան, Քրիստոնէութեան եւ Մահմէտականութեան, սրբավայրն է: Հըրեաներուն Տաճարը հոն էր. Յիսուս հոն խաչուեցաւ եւ յարութիւն առաւ. Քիստ

պէէն ետքը Իսլամութեան է՛ն նշանաւոր մզկիթը, որ իբր թէ Մուհամմէտի համբարձման տեղն է և Օմարի մզկիթը կը կոչուի, հոն է: Այս քաղաքը, որ Սալահէտտինի օրերէն ի վեր (11է9) Իսլամական իշխանութեան տակ կը գտնուէր, 1918, Դեկտ. 9էն ի վեր քրիստոնեայ տիրապետութեան մը ենթակուած է: Վերջին տասը տարուան միջոցին քաղաքին բնակչութիւնը գրեթէ կրկնապատկուած է, 120,000ի հասեր է, որուն մօտաւորապէս 50,000ը կ'ենթադրուի թէ Հրեաներէ կը բաղկանայ: Պաղեստինի մէջ Անգլիական կառավարութեան ազդեցութիւնը ամէնէն աւելի Երուսաղէմի մէջ կ'զգացուի: Քաղաքը արագօրէն մեծնալու վրայ է, պարիսպներէն դուրս այսօր բոլորովին նոր, եւրոպական դրութեամբ երկրորդ Երուսաղէմ մը յառաջ կուգայ, որուն տարածութիւնը հին քաղաքին գրեթէ կրկինն կը հաւասարի թերեւս: Այսօր 20-50-100,000 ոսկինոց շատ մը շէնքեր կառուցումի մէջ են: Սկսած են շինել Ե. Ք. Ընկերութեան յատուկ շէնք մը, որուն ծախքը կ'ենթադրուի թէ կէս միլիոն տօլար կամ 110,000 անգլ. ոսկի է: Խմելու համար գեղեցիկ ջուր հայթայթուած է, որ քաղաքին ամէն կողմը կը բաշխուի: Տակաւին լուրջ ջանքեր կը կատարուին մօտերս նոր առատ ջուր բերել տալու համար: Պարիսպով չըջապատուած քաղաքին մէջ ոնէ շինութիւն կամ նորոգութիւն խիստ պայմաններու ենթարկուած է, հին քաղաքին իսկական վիճակը չկորսնցնելու համար: Անգլիական կառավարութիւնը շատ խիստ միջոցներու դրամած է հին յիշատակարաններուն իրենց նախկին վիճակին մէջ պահուելուն համար: Քաղաքին մէջ շատ մը վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ, միաբաններ և միաբանուհիներ կան: Մերթ ընդ մերթ նոր սրբավայրեր կը գտնուին (և թերեւ

երբեմն ալ կը հնարուին), որոնց վրայ եկեղեցիներ, մատուռներ կը կառուցուին: Այս նպատակներու համար Լատիններու և Հրեաներու կողմանէ ահագին քանակութեամբ գումարներ Երուսաղէմ կը մտնեն: Մանաւանդ ստորերկրեայ սրբավայրերու թիւը աւելի կը շատնայ:

Պարսպապատ քաղաքին ամենապատուաւոր թաղամասին մէջ Հայերը բազդատմամբ ուրիշներուն շատ ընդարձակ և թանկագին մաս մը ունին. Ս. Յակոբայ վանքը, Եկեղեցին, Պատրիարքարանի շէնքերը, Ժառանգաւորաց վարժարանը, Ս. Փրկիչի վանքը, Գերեզմանատունը, Հերոդէսի պալատը կոչուող ընդարձակ գետինը և անոր շուրջը գտնուող կարգ մը տուններն ու շէնքերը այս մասին մէջ կը գտնուին: Միայն վանքի մէջ մեծ ու պղտիկ 500 սենեակներ կան: Կը պատմուի թէ վանքը շատ թանկագին կալուածներ ունի, որոնք տարեկան 15-20000 անգլ. ոսկի հասոյթ կը բերեն: Ներկայիս կը հաշուեն թէ Երուսաղէմի հայութեան թիւն է 2500-3000, որուն կէսէն աւելին կը բաղկանայ վանքի մէջ առանց վարձքի տեղաւորուած զաղթականներէ: Ցաւալի կէտերէն մէկը այս է որ Ս. Քաղաքին մէջ հայերուն թիւը այսչափ փոքր է, և անոնց ալ կարեւոր մէկ մասը սեւ մէկ կերպով կախում ունի վանքէն: Պէտք է լրջօրէն խորհիլ ասոնց դարման մը գտնելու համար:

Ընդհանրապէս բոլոր Պաղեստինի մէջ և մասնաւորապէս Երուսաղէմի մէջ ապրուստը շատ սուղ է: Չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք որ Հալէպիին կրկինը և նոյնիսկ անկէ աւելի սուղ է: Իսկ հասոյթի աղբիւրները, գործը բազդատմամբ քիչ են, Կ'ըսուի թէ երկրին ներածութիւնը սրտածութեան եռապատիկն է, Այս կերպով ժողովուրդին ապրուստին զխաւոր միջոցը կը կազմեն ուխտաւոր-

ները և զբօսաշրջիկները, որոնց երկրին մէջ ձգած տարեկան գումարը, իրազեկ մէկու մը կարծիքին համեմատ, չորս միլիոն անգլիական ոսկի է: Մանաւանդ Հրեաները, (Սիոնականները) վերջին 8-9 տարիներէ ի վեր մեծ քանակով գրամ ծախսած են երկրին մէջ: Շատ ուշագրոթիւն կը գրաւեն սիոնական գաղութները, որոնք հաստատուած են Հայֆայի մէջ, Սամարիոյ Եստրալիոն և Մէծիաթա տնուն դաշտերուն մէջ և ուրիշ զանազան վայրերու մէջ: Այն մարմինները՝ որոնք Հայերուն համար նոր գիւղեր հաստատել կուտան, շատ բաներ կրնան սուրբիլ այս Սիոնական գաղութներէն: Եաֆայի շատ մօտ անոնք չինել տուած են Թէլ-Ավիվ անուն քաղաք մը, որ իր քառասուն հազարնոց բնակչութեամբ, Արեւմտաքի վերջին ճաշակին համեմատ եղած շինութեամբը, տիպար քաղաք կոչուելու արժանի գեղեցկութեամբը բոլոր այցելուներուն ուշագրոթեան և հիացումին կ'արժանանայ: Միայն թէ մեր տեղեկութեան համեմատ վերջին մի քանի տարիներէ ի վեր Սիոնականներու խանդը բաւական պակասած է, որուն պատճառը, կ'ըսեն, այն է թէ անոնք՝ իրենց ըրած ծախքերուն փոխարէն անկալուած նիւթական շահը չեն կրնար ստանալ: Ահա այս պատճառաւ մի քանի տարիներէ ի վեր Հըրեայ ներգաղթը իր նախկին թափը կորսնցուցած է: Պաղեստինի բնակչութեան ընդհանուր թիւն է 850.900000, որուն մօտաւորապէս 120000 է Հրեայ, 85,000ը Քրիստոնեայ և Ռապսալ իսլամ է:

Պէյրութ

Ձ. Ա. Պէյքճեան

ՆԱՍՏԱԿ

Վեր. է. փարթիւ զէպի Ամբրիկա իր ուղեւորութեան առթիւ կարգ մը տեղեր հանդիպած ընտելի իր տղաւորութիւններուն մասին Բարիկէն կը գրէ հետեւեալը:—

«Կ. Պոլսոյ մէջ եռօրեայ այցիս առթիւ մեծ հաճոյքը ունեցայ բարեկամներս տեսնելու. ապա Տր. Ծ. Կուստէլի հետ Յունաստան եկայ նաեւ՝ Սփուլալ Րիլիմիի ամալերջի հանդէսին ներկայ գլուխուելու համար: Խոր կերպով ազդուեցայ այն գեղեցիկ հոգիէն, որ այդ հաստատութեան հետ կապուած բոլոր անհատներուն մէջ կը տեսնուէր. եւս կը հաւատամ որ անոնք շտալաւ գործ կը տեսնեն:

« . . . Առիթը ունեցայ երկու օր Հոփմի մէջ, զոր երբէք չէի այցելած, և երեք օր Ֆլորէնսի մէջ անցնել: Հոգիկան մեծ վայելք եղաւ ինծի համար տեսնել Վաղրիկանի Կալիքիս և Ֆլորէնսի երկու մեծ Կալիքիսներուն նկարները: Անկարելի է որ մարդ Հոփմի մէջ Ս. Պետրոսի գեղեցկութեամբը և վեհութեամբը չապաւորուի: Բոլոր աշխարհիս վրայ ամենամեծ և անկասկած ամենէն պատկառազգու քրիստոնէական եկեղեցին է ան: Իմ այցելած օրս Վաղրիկանի նոր պեռութեան գինուորները կ'սկսէին զբաւել Ս. Պետրոսի մէջ Իտալիոյ կառավարական գինուորներուն տեղերը:

« . . . Մարտիլիոյ կայարանը հանդիպեցայ Պատ. . . Ղազարոսեանին, որ ներկայիս Մարտիլիոյ մէջ կը գործէ Աֆսիոն Քրիքիէն աւ Օրիսն ընկերութեան կողմանէ աւետարանական գործին իրը մէկ վերահսկիչը Փրանսայի հայ գաղթականներուն մէջ: Մարտիլիա չորս օր անցուցի, իսկ Օպինասի, Վիէնի և Լիոնի մէջ մէկ մէկ գիշեր: Այս կերպով առիթը ունեցայ թէ քաղաքներու և թէ գիւղերու մէջ գաղթականական կեանքին պայմանները դիտելու:

Այսպէս կ'երևի թէ Փրանսայի մէջ թէ գործարաններու (կօշիկի և մետաքսի) և թէ ագարակներու մէջ Հայերու համար բաւական գործ կայ, արդար վաճարուածով և լաւ պայմաններու տակ: Մեծ հաճոյքով դիտեցի գիւղերու մէջ

կրիտատարղնեիրու և մանաւանդ չափա-
հաս որբերու առողջ և երջանիկ դէմ-
քերը: Ֆրանսայի հայ գաղթականնե-
րուն կաշուութեան մասին երկու քննադա-
տելի կէտեր մարդուն ուշադրութիւնը
կը դրաւեն: Առաջին՝ թէ ցած վճա-
րումներու պատճառաւ կիներն ալ կը-
ստիպուին էրկամարդերու հետ զործա-
րաններու մէջ աշխատիլ. շատ անգամ
նոյն ընտանիքին մի քանի անդամները
կ'ստիպուին զործել: Երկրորդ՝ գաղ-
թականներու ցրուած վիճակը: Այս
կացութեան իբր արդիւնքը ըլլալով շատ
դժուար կըլլայ ժողովուրդին կրօնական
պէտքերուն գոհացում տալ: Ախիօն
Քրեքիէն ութը քարոյիչներ և աւետա-
րանիչներ կըզործածէ բոլոր Ֆրանսայի
մէջ և Զուրիցերիոյ Ս. Գրքի ընկերու-
թիւնը՝ չորս շրջիկ զբաժաններ. Հայ
Առաք. Եկեղեցին սակաւաթիւ կզերա-
կաններ ունի. այս բոլորը շատ քիչ են
Ֆրանսայի 60 000 նոց հայ բնակչութեան
համար:

«Երկրորդ քննադատելի կէտը այս է.
բոլոր մանուկները պետական դպրոցները
կը յաճախեն, որ արագօրէն կը յառաջ-
գիմեն Ֆրանսերէն ուսանելու մէջ, և
թերեւ լաւ կրթութիւն մ'ալ կ'ստանան.
բայց կրօնական դաստիարակութիւն և
մայրենի լեզուն սորվելէ զրկուած են:
Հայերը շատ կը փափաքին որ առնուազն
շաբաթը երկու անգամ պատիկները ա-
ռիթը ունենան հայերէն դաս և կրօնա-
կան ուսում առնելու համար. բայց աղ-
քատութիւնը և ժողովուրդին ցրուած
ըլլալը կ'արգիլին այս փափաքին գոհա-
ցում տրուիլը:

«Անցեալ կիրակին Ալլասի Կրա-
ֆընշթատըն քաղաքին մէջ անցուցի,
ուր Ախիօն Քրեքիէն աւ Օրիան ընկե-
րութիւնը իր տարեկան ժողովը կունե-
նար: Ինձմէ գատ ուրիշ չորս հիւրեր ալ
ներկայ էին, — Պատ. Ղազարոսեան
Մարտիրոսյէն, Փաթիօր Կրամպէրկ,

Հոլանտացի հովիւ մը, որ այս զործով
չատ հետաքրքրուած է, Վեր. Սմբատ
Պաղտասարեան Պերնէն, Օր. Ուրիտը-
ման . . . ցի կին մը, որ Բարիկի Հայե-
րուն մէջ իբր աւետարանիչ կը զործէ:

«Երկու շատ հետաքրքրական պաշ-
տամունք ունեցանք, մէկը առաւօտուն
Եկեղեցիին մէջ և միւսը կէսօրէ վերջ
բացօթեայ տեղ մը, ուր 500 ունկնդիրներ
կային:

«Ժընէի մէջ երկու օր մնացի, և այ-
ցիկեցի իմ նախկին աշակերտս և ուսու-
ցիչս, Փրօֆ. Ն. Պէկեանը և երկու հայ-
կական որբանոցները, որոնք կը կառա-
վարուին Քրաֆթ Պօնտարի առաջնորդու-
թեան տակ եղող մասնախումբի մը կող-
մանէ:

«Բարիկի մէջ 24 ժամ մնացի միայն
չատ զբաղեալ վիճակի մէջ: Տեղիս քա-
րոյիչին, Տիար Պոնտալեանի, առաջնոր-
դութեամբ Բիլիֆի պաշտօնատեղիները
այցելեցի. տեսակցեցայ Հայ Եպիսկոպո-
սին, Տիար Բաշալեանին և Հ. Բ. Ը.
Միութեան. . . Տօքթ. . . ի հետ: Ի-
րիկունը ճաշեցի Սովակի նախկին բարե-
կամներու մէկ խմբակին հետ . . . :

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«ԳՈՐԾԱԴԻՐ»Ի ԺՈՂՈՎՃ

Հայ Աւետ. Միութեան և Պօրտի
Ընկերութեան 9 ներկայացուցիչներէն
բաղկացեալ խառն զործադիր մարմին
մը կազմուած էր Նիւ Եօրքի մէջ՝ շարու-
նակելու համար յիշեալ մարմիններու
զործը Հայ Աւետ. Եկեղեցիներու մէջ:
Այս զործակցութեան առաջին տարին
յաջողութեամբ լրացած է եւ երկրորդ
տարուան իւլիոստքը մանրամասնօրէն
պատրաստուած և պատկան մարմիննե-
րուն զրկուած է: Սուրբիոյ մէջ Կեղոր-
նական Խառն Գործադիր Մարմինը ներ-
կայացնող Տեղական Գործադիրը Յոնիս

25ին իր մէկ նիստէ բաղկացեալ ժողովին մէջ ռուսումնասիրեց տեղական Միութեան համար գծուած ատրիկան ելեմուտքը և որոշումներ ըրաւ:

Այս խառն զործադիր ժողովին զործին մասին պաշտօնաւ մը տալու համար տանք զրամական յատկացումներու հետեւալ ցանկը. —

Երկիր	Յաւկցմ.	Յաւերում
Սուրիա	18, 173	2,996
Յունաստան	8,057	2,175
Կ. Պոլիս	2,160	200
Կիպրոս	240	...
		Նուագում
Ֆրանսա	1,000	1,000
Հայաստան	...	2,722
Մ. Նահանգներ	1,000	1,000

Յատկացումներու ընդհանուր գումարը \$ 30,530, է որ անցեալ տարուանէն \$ 649 աւելի է: Այս ցանկէն յայտնի կը տեսնուի որ Կիպրոսական Գործադիր տեղական ծախքերէն կատարուած \$ 1000 խնայողութիւնը, Ֆրանսայի բաժինէն պակսեցուած \$ 1,000 և Հայաստանի բաժինը ամբողջ, զոր զրկել անկարելի եղած է տիրող հակակրօնական պոպմաններուն պատճառաւ, գրեթէ բաժնուած է Սուրիոյ և Յունաստանի միջև:

Սուրիոյ 1929—30ի համար յատկացուած բաժինին մանրամասնութիւնները.

Նպասակ	Յաւկցմ.	Յաւերում
Քարոզիչներ	9,793	1,731.80
Կին շրջիկ քրդչ.	1,842	84.00
Դպրոցներ	4,793	525.00
Ընդհանուր	1,745	645.00
Գումար	18,173	2,995.80

Տեղական մարմինները իրաւասութիւն չունին նպատակի մը համար յատկացուած գումարը ուրիշ նպատակի մը համար զործածել, բայց արտօնուած են ունէ նպատակի համար յատկացուած գումարին մանրամասնութիւնները որոշելու տեղական պահանջին համաձայն, նկատի առնելով որ զործին վերջնական

պատասխանատուութիւնը տեղական եկեղեցիներուն կ'իյնայ:

Բայց Սուրիոյ Տեղական Գործադիր կողմանէ Կիպրոս զրկուած յատկացումներու ցանկը նոյնութեամբ չէր ընդունուած վերջինին կողմանէ, որ կարգ մը պակսեցումներ և ջնջումներ կատարած էր: Ահա այս չընդունուած, պակսեցուած յատկացումներու պատճառաւ յաւաք եկած ղեկարութիւնները նկատի առնելու համար Տեղական Գործադիր իր այս գումարումին մէջ ծանօթութիւններով լուսարանեալ պատասխանատեղեկագիր մը պատրաստել և Կիպրոս զրկել որոշած է:

ՅԱՋՈՂ ՀԱՆԴԷՍ ՄԸ

1929, Յուլիս 2, Երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 3. 30 ին տեղի ունեցաւ Քէսսապի վիզախմբէն, Քէօրքիւնէի վարժարանին ամսվերջի հանգէսը:

Քէսապէ և ուրիշ վիզերէ եկած հիւրերու շարքին ևս ալ ներկայ էի: Խոստովանիմ սակայն, թէ չէի ակնկալած ունէ յաջողութիւն մը կամ պերճութիւն մը՝ որ արժէր հեռու տեղերէ հոն ներկայանալու յոգնութիւնը:

Ատենապետութեամբ տեղւոյն հովիւին, վեր. Ա. Պէրպէրեանի, հանդէսը սկսաւ «Տէր կիցս պահա» լաւ պատրաստուած, յուզիչ մաղթանքով: Հայերէն, Անգլիէրէն և Արաբերէն արտասանութիւններու ճոխ շարքը, բոլորն ալ խնամքով ընտրուած, կը պարունակէին կրօնաբարոյական և ազգային վեհօգիւմը:

Աստիք ընդմիջող տասնեակ մը երգեր, որոնց կարգին անգլիերէններն իսկ, զնահատութեան արժանացան, հոն ներկայ եղող և երաժշտութիւնէ հասկցող բոլոր ուսեաներէ և համակ հանդիսականներէ, իրենց ներդաշնակութեամբ և յստակութեամբ: Այսպիսով 1.40 ժամուայ հանգէսի բոլոր տեղութեան միջոցին հանդիսականները միշտ թարմ և

գործնացին: Կարգապահութիւնը կատարեալ էր գեղջկական հանգէս մը ըլլալով հանդերձ:

Բարոյալից արամախօսութենէ մը վերջ, երգով մը մանկանց բաժինը վեր դառաւ: Նուիրաբաշխութենէ յետոյ զի դախմբին հայ միւսիրին քաջալերական նով եւ վեր: Տ Անդրէասեանի աղօթքով եւ օրհնութեամբ հանգիսականները ցըռեցան ուրախ զուարթ, Աստուծոյ փառալով ուսման ու գիտութեան այն կայծին համար, զոր ինք զրեւ էր այս խեղճողովուրդին մէջ եւ զոր զգալի օրէն բոցավառած էր այս հանգէսը ներկայացընող մանկանց սրտերուն մէջ:

Վարժուհին՝ Օր. Լուսիա Շատարեան իր կարելին բոլորէր: Մանաւանդ իր երաժշտական տաղանդն ու ջանքը պատկերներու շրթունքներէն իսկ յայտնի կը ծանուցուէին կարծես: Ջանքերը իրենց հասուն արդիւնքը տուած էին, որը գովելի եւ գնահատելի էր:

Հանգէսին յաջողութեան մասին խօսելէ վերջ՝ պարտք կ'զգամ բոլոր նաեւ վեր. Ա. Պէրպլերեանի պարկեշտ զգացմամբ պատասխանատուութեան եւ անձնուրացօրէն բոլոր օժանդակութեան մասին, որով քաջալերած եւ աւելի եւս արդիւնաւորած էր վարժուհիին ջանքը: Բեաւոյ, 6 Յուլ. 1929

Ս. Գ. ՍԻՒԼԱՀԵԱՆ

ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ախթիս Բրեքիեկեան Օրիան Ընկերութեան միսիօնարուհիներէն Օր. Հ. Պիւլիչօրս տարիէ ի վեր Ազիլիյէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ երկսեռ նախակրթարանին մէջ իրր ներքին տեսչուհի անձնուիրարար եւ արդիւնաւոր կերպով աշխատած էր: Բայց Յուլիսէն սկսեալ իր զբաղումներուն շատութեան պատճառաւ հրաժարած ըլլալով իր պատասխանատու պաշտօնէն, դպրոցին հոգաբարձութիւնը լաւ զաղափարը յղացել էր գնահատանքի երեկոյթ մը սարքել Ազիլիյէի Եկեղեցիին մէջ, մասնակցութեամբ ուսուցչական մարմինն եւ եկեղեցւոյ խորհրդովին: Վեր. Կ. Յարութիւնեան դպրոցին կողմանէ յարգալից բաւերով Օր. Հ. Պիւլիչի նուիրեց արծաթեայ բաժակ մը իր ափսէով, զոր վերջինը ըն-

դունեց եւ յուզեալ շեշտերով իր շնորհալուրութիւնը յայտնեց:

ԱՄԷՆՈՒՆ ՀԱՄԱՐ

ՍՐՏԻԴ ԿԱՅԾՐ

Ջմեռնային գիշեր մըն էր: Ընտանիքին սակաւաթիւ անդամները օճախին շուրջը բոլորուած էին: Հայրը իր ազուն դառնալով՝ «Գիշերը կ'երեւի թէ պաղ պիտի ըլլայ զաւակս, մեզի դուրսէն փայտի կոճղ մը ճարէ», ըսաւ: Տղան, որ ըմբոստ հոգի մ'ունէր, զուրս գնաց բայց ա'լ չվերադարձաւ: Ծնողքը շատ մտահոգուեցան իրենց որդւոյն բացակայութեան վրայ, եւ ջանացին անոր հետքերը գտնել: Ատեն մը ետքը հասկըցան որ ան նաեւ մը մէջ իրր նաւաղ պաշտօն առած եւ նաւահանգիստէն ճամբայ ելած էր, յուսալով որ ճամբորդութիւնը կարճ պիտի տեւեր եւ շուտով պիտի կրնար վերադառնալ: Բայց այս մեկնումը քսան տարուայ թափառաշրջիկ կեանքի մը սկզբնաւորութիւնն եղաւ միայն:

Երիտասարդը թափառականի կեանքէն ա'լ ձանձրացած հայրենիքի ջերմ կարօտը զգալ իր սրտին մէջ: «Արդեօք իմ բացակայութիւնս զգալի՞ է տան մէջ» խորհեցաւ ան. եւ սկսաւ երեւակայել կարելի բոլոր փոփոխութիւնները: Նոյնիսկ մտաբերել թէ օտար մը զինքը պիտի դիմաւորէր իրեն այնքան սիրելի հայրենական տան սեմին վրայ: «Ծնողքս տակալին կ'ապրի՞ն. արդեօք ուրիշ տեղ փոխադրուած են», կը խորհէր ան:

Ճամբայ ելան դէպ ի հայրենիքը: Երբ մանկութեան օրերուն ապրած տանը մօտեցաւ 20 տարի առաջ հօրը իրեն տուած պարտականութիւնը յիշեց, կտնգառաւ ճիշդ նոյն փայտանոցի առջեւ, կոճղ մը ուսը առաւ եւ տան դուռը վարկաւ: Դուռը բացուեցաւ ինքզինքը աւելի եւ կորաքամակ վշտահար ծնողներուն առջեւ զտաւ, որոնց երջանկութիւնը ալ սահման չ'ունէր:

Այսօր քանի օճախներու մէջ վիշտը կը տիրէ, քանզի մէկը պակաս է, որուն կոճղը, սիրտը պիտի արծարծէր մարած սիրոյ օճախը: